

Տ. ՏԻՐԱՆ ՔԱՀԱՆԱ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Ծնվել է 1964 թ. հունիսի 26-ին, Չարենցավան քաղաքում:

1971—74 թթ. սովորել է տեղի № 2 միջնակարգ դպրոցում:

1974 թ. ընտանիքով տեղափոխվել են Էջմիածին: Կրթությունը շարունակել է Էջմիածնի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում և ավարտել 1981 թվականին:

1981 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983—85 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

Զորացրվելուց հետո վերադարձել է Մայր Աթոռ և շարունակել կրթությունը հոգևոր ճեմարանում:

1988 թ. մայիսի 12-ին, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ: Նույն տարին, ավարտելով հոգևոր ճեմարանի դասընթացը, աշխատանքի է նշանակվել Մայր տաճարի թանգարանում:

1989 թ. մարտի 15-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Գրիգոր Տաթևացու «Առակաց մեկնութիւն»-ը» թեմայով:

1989 թ. հուլիսի 1-ից ծառայության է նշանակվել Երևանի Ս. Սարգիս եկեղեցում որպես սարկավագ:

Ներկայումս ծառայության է նշանակված Ս. Սարգիս եկեղեցում որպես ծիսակատար քահանա: